ԿՐԻԿՈՐ ՄԱԶԼՈՒՄՅԱՆ

ԵՐԳ ՀԱՄՇԵՆԻ ՄԱՍԻՆ

Թո'ղ դառնամ թիրախ ես չար ոսոխի,
Թո'ղ սուր ու հրով իմ անձը հերքեն -
Պիտ երգեմ գովքը Համշենիս հողի,
Այնպես, ոնց ոչ ոք չի կարող երգել:

Լսե'ք, ծնվում է կիճերի շեմին
Ոչ թե շառաչը հողմերի համառ,
Ձանն է հայրենյաց՝ իմ հին Համշենի՝
Գալիս դարերի խորքերից խավար:

Վերջին հանգրվան, իմ հին Հարդաշեն,
Հիշում եմ արևդ, ամպերդ ձորի:
Կիմանա՞ս, ասա', հայրենի Համշեն,
Վերադարձը քո կարոտյալ ծոռի:

Փուրգունա, Վարշամ՝ շեներ սուրբ հողի,
Ծանոթ պատկերներ՝ սարեր, գետ, ջրվեժ,
Բառբառ Համշենի, քարեր կոթողի,
Ապրում եք իմ մեջ ու շնչում հավերժ:

Առյուծգլուխ ավազներ դեղին՝
Ագահ վագրերի աչքերի նման,
Արյունը հայոց՝ մեր վիշտը լեղի

Պահեցեք հավեժ՝ նինջ չկա նրան:

Այն ճիչը հավերժ, աշխարհն ի ցնցեալ,
Այն վերջին ճիչը մեռնող հայուհու....
Միան քո դաժան, սև հոգին, Քեմալ,
Կարող էր ծնել այդքան չարություն:

Սպանված, մորթված, խոցված, անարգված
Հազար ու հազար, եղբա'յր, մայր ու քույր,
Ավազուտներում թաղված, անմոռաց,
Հոգիներն են ձեր կանչում ամենուր:

Երկինքն էր կախվել՝ առճիճ էր գյուման,
Ամեն ինչ փլված հոգու մեջ քո շեն,
Հոսանքը մարդկանց՝ արյունիդ նման
Հոսում էր, կորչում, իմ խաչված Համշեն:

Թեժ էր ավազդ, օ՜, Արաբստան,
Ու գիրկդ դաժան, ափերդ օտար,
Քո ավազները – եղեռնի ոստան,
Այրում են հուշիս ծվենը մադար:

Քեզ սատանա է ծնել մի խարդախ,
Սնել ստվերը նենգ Հերովդեսի,
Դարձրիր Դեր-Զորը գերեզման, ավաղ,
Հայոց մայրերի, հայ մանուկների:

Դու սպանդար՝ մութ, սև միջնադարի,
Քեզ ողբը մանկաց երբեք չի հուզել,
Որովայինն ես խոցել այն բարի
Կանաց, որոնք սուրբ երկունք են ուզել:

Չգիտեմ քեզանից նենգը մարդկանց մեջ...
Այն սարսափելի գարշանքն եմ հիշում,
Երբ դուք սերբական գանգերից այն խեղճ
Դամբարան էիք կառուցել Նիշում:

Ենիչարնե'ր, անխիղճ, տմարդի,
Հոշոտելու պատրաստ շան նման...
Քեմա'լ, համիդնե'ր, ժամը սուրբ դատի
Դեռ կգա մի օր, կտեսնեք նրան:

Եվ ահա ձոր ու կիրճերից դանդաղ
Մշուշն է ելնում, նման շարանի,
Եվ զավակների՝ Համշենի,անթաղ,
Ստվերներն են լուռ գալիս դիվանի: